

## ՊՈԼՍԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Կ. Պօլսի ազգային վարչութեան ուսումնական խորհուրդը վերջերս ամեն տարի հրատարակում է Տաճկաց մայրաքաղաքում գտնուող հայ դպրոցների վիճակագրութիւնը։ Նորերս Պօլսի պատրիարքարանից ստանալով այդպիսի մի վիճակագրութիւն, որ վերաբերում է 1903 թ., մի քանի խօսքսվյայտնենք մեր դիմողութիւններն այդ ինքն ըստ ինքեան ցանկալի և օգտակար հրատարակութեան մասին։

«Վիճակացոյցի» մէջ առաջ են բերուած թաղային դըպրոցների անունները, դպրոցների բաժանմունքները, աշակերտների ու աշակերտուհիների, դասատունների թիւը և ամսական հասոյթն ու ծախքը։

Պօլսի թաղային կոչուած քառասուն դպրոցներն ընդհանուր անունով կոչուում են «տարրական նախակրթարան», և բաժանուած են երեք կարգի՝ 1) «տարրական դասընթացք», 2) «միջին դասընթացք», և 3) «բարձրագոյն դասընթացք»։ Դրանցից իրաքանչիւլն երկու տարրուայ դասընթացք ունի, ուրեմն ընդամենը՝ վեց տարրուայ դասընթացք։ Համարեան բոլոր «տարրական նախակրթարանները» ունին նաև «մանկապարտէց» կամ «ծաղկոց»։

Սակայն վիճակացոյցի մէջ գոնէ ծանօթութեամբ չէ յիշուած, թէ այդ բաժանմունքներում ինչ առարկաներ են աւանդուում, որպէս զի պարզ դադափար կարողանայինք կազմել այդ դպրոցների ծրագրի մասին։ Արդեօք ինչու են այդ դըպրոցները տարրական նախակրթարան կոչուում։ Կան ուրիշ դպրոցներ, որոնց համար սրանք նախակրթարան են, այսինքն այդ դպրոցների համար աշակերտներ են պատրաստում կամ թէ ուրիշ խօսքով հայ միջնակարգ դպրոցներ էլ կան Պօլսում։ Թէ ոչ Վիճակացոյցի մէջ՝ իրեն ծանօթութիւն միայն յիշուած է, որ «Ղալաթիոց» կեդր. վարժարանը կը յաճախին 85 ուսանողներ, չորս դասարաններու բաժնուած, և կը պաշտօնավարեն 19 ուսուցիչներ։ ամսական ծախքն է 7563 դրւ։։ Ուրեմն կարեի է եղակացնել, որ Պօլսի 40 թաղային դպրոցների համար այս միակ միջնակարգ դպրոցը գոյութիւն ունի, և առաջիններում սովորող 54:9 երեխաններից՝ իրենց ուսումը շարունակում են ազգային դպրոցում միջմիայն ուժսունունինգը։ իսկ մնացածները... ինչու կենդրունական դպրոցը այդշափ սահմանափակ թուով է աշակերտներ ընդունուած։ Միթէ Կ. Պօլսի հարուստ հայերը մի կարգին միջնակարգ դպրոց պահելու միջոց և կարողութիւն չունին։

Բայց վիճակացոյցն աւելի տարուր փաստեր է պարունակում։ 40 թաղային դպրոցներից միմիայն ուժն ունին տարրական նախակրթարանի բոլոր դասընթացքները։ մնացածներից մեծ մասը միայն չորս տարրուայ դասընթացք ունի։ Համարեան

բոլոր դպրոցներն էլ—բացառութեամբ մի քանիսի—խառը դըպրոցներ են, այսինքն տղայ և աղջիկ միասին են սովորում—արդեօք սրանք դասարաններով բաժանուած են՝ թէ միատեղ են նստում, չի երևում վիճակացոյցից:

Աչքի է ընկնում այն հանգամանքը, որ դպրոցներից շատերում քիչ քանակութեամբ աշակերտներ ու աշակերտունիներ են սովորում. օրինակ «Ներսիսեան» վարժարանում (ժաղկոցի հետ միասին) սովորում են ընդամենը 22 տղայ և 9 աղջիկ=31 հոգի. Գարամանեան վարժ. 10 տղայ և 7 աղջիկ=17 հոգի. Ա. Նշան՝ վարժ. 5 տղայ 8 աղջ.=13 հ. Ա. Նիկողայոսեան վարժ. ընդ. 12 հոգի. կայ մինչև անգամ 1 տղայ և 2 աղջ.=ընդամենը 3 հ. ունեցող դպրոց (Ա. Առաքելոց): Ամենամեծ թաղային դպրոցը Գում-Գաբուի Պէտքեանի-Լուսաւորչեանն է, որ ունի 370 աշակերտ և 246 աշակերտունի:

Նատ լաւ կը նոյթ է այն հանգամանքը, որ համարեա բոլոր թաղային դպրոցները (բացառութիւն են կազմում միայն երեքը) ծաղկոցները ունին. սրանցից մի երկուսն աչքի են ընկնում երեխաների թուով. մէկում սովորում են 105 տղայ և 100 աղջիկ (Արշակունեան), երկրորդում 114 տղայ և 86 աղջիկ (Նարեկեան). բայց կան և այնպիսիները, որտեղ սովորում են ընդամենը՝ 6 տղայ և 5 աղջիկ (Ա. Թարգմանչաց) 4 տղայ և 5 աղջիկ (Ա. Թաղէսուեան), 3 տղայ և 5 աղջիկ (Ա. Հոփիս.), միայն 6 տղայ (Երից մանկանց) և այլն:

Պօլսի բոլոր թաղային դպրոցներում սովորում են ընդամենը՝ 3060 աշակերտ, 2859 աշակերտունի=5419 հոգի, որոնցից նրաբարժ են 1777 հ. իսկ մնացածը թոշակատու (արդեօք թոշակները կամ ուսման վճարները հաւասար են, թէ տարբեր, չի երևում վիճակացոյցից): Այդ թուից 1206 տղայ և 1095 աղջիկ սովորում են ծաղկոցներում. 545 տ. և 418 աղ. I տարի. 423 տ. և 249 աղ. II տարի. 412 տ. և 240 աղ. III տարի. 226 տ. և 160 աղ. IV. տարի. 154 տ. և 102 աղ. V տարի. և կերջապէս 80 տ. և 63 աղ. VI տարի: Աչքի է ընկնում այս թուերի հետզհետէ փոքրանալ:

Բոլոր թաղային դպրոցների վրայ ծախսուում է ամսական՝ 82,865 դրշ. որից 49,318<sup>1/2</sup>, դր. տրւում է եկեղեցական դրամարկղներից, 29,975<sup>1/2</sup>, դր. գոյանում է աշակերտաների և աշակերտունիների թոշակներից (ուսման վճար), 3571 դր. Եւ նուէրներից:

Բոլոր թաղային դպրոցներում ուսուցանում են 194 ուսուցիչ և 111 վարժունի=305 հոգի: Վիճակացոյցը չի յայտնում թէ արդեօք Տաճկահայ. ուսուցիչների և վարժունիների պատկառելի քանակութիւնը (գաւառներում պաշտօն վարողների հետ ի միասին մօտ երկու հազար հինգ հարիւր հ. (2500) որտեղ է պատրաստում իւր պատաս-

խանատու պաշտօնի համար: Ահա դարձեալ մի շատ լուրջ խնդիր, որի վրայ պէտք է ուշադրութիւն դարձնեն Տաճկահայերը: ուսուցչական դպրանոցի հիմնարկութիւնը ամենակարևոր և անհրաժեշտ հարցերից մէկը պէտք է լինի ազգային վարչութեան համար: Եթէ պատրաստուած և իրենց գործին հմուտ դասատուներ չունենանք՝ դպրոցներն երբէք չեն կարող իրենց նպատակին հասնել. իսկ առանց ուսուցչական դպրոցի պատրաստուած ուսուցիչներ չենք կարող ունենալ:

ԹՐԻ

## ՊԵՏԵՐԲՈՒՐԴԻ 200 ԱՄԵԱԿԸ

Նւրոպական գեղեցիկ և փառաշէն մայրաքաղաքներից մէկը, լայնատարած Ռուսաստանի կայսերանիստ Պետրօքառլուգ մայիսի 16-ին տօնեց իւր հիմնարկութեան երկուհարիւրամեայ յօրելեանը: Շինարար կայսր Մեծն Պետրոսի ձեռակերտն այդ օրը իւր վրայ էր հրաւիրել ամբողջ Ռուսաստանի և կարելի է ասել, նաև ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը: Յօրելեանը կազմակերպել էր Պետերբուրգի քաղաքային վարչութիւնը և հրաւիրել թէ ամբողջ Ռուսաստանի և թէ եւրոպական նշանաւոր քաղաքների վարչութիւններին:

Հանդէսն սկսուել է առաւտօեան 8 ժամին թնդանօթների որոտումններով, որին հետևում են նևա գետի վրայ գըտնուող բոլոր նաւերից Պետրոսեան քայլերգի և ժողովրդական օրհներգի հազարաձայն հնչիւնները: Այդ վայրկեանին նաւասահիները Պետրոս Մեծի տնակից դուրս են բերում առաջին ուսու ծովագնացի պարանը և դնում յատուկ դրա համար շինուած նաւակի վրայ: Ապա գալիս են Պետրոսի տնակը՝ քաղաքի, ազնուականութեան, զիմստունների, հոգևորականութեան ներկայացուցիչները և այդտեղից սկսում է եկեղեցական թափորը՝ գեղեցիկ զարդարուած նաւերով դէպի մեծն Պետրոսի արձանը:

Ժամի 12 ին նորին Մեծութեան Օգոստավիտ կայսրի և կայսրուհիների, մեծ իշխանների, քաղաքական ներկայացուցիչների և խուռան բազմութեան ներկայութեամբ հանդիսաւոր կերպով բացւում է նորակերտ, Տրոյցիկի կոչուած կամուրջը: Այս կամուրջը շինելու համար ժամանակ է 7,100,000 մթ. կամուրջի երկարութիւնը կէս վերստից աւելի է:

Կամուրջը բանալուց յետոյ նոցին Մեծութիւններն և շքախմբի հետ գնում են Պետերբուրգի հիմնադրի արձանի մօտ, որտեղ արդէն հաւաքուած են լինում օտար պետութիւնների ներկայացուցիչները, սենատորները, բարձրասահման անձինք, իրաւասուներ, ուրիշ քաղաքների ներկայացուցիչներ և քաղաքային դպրոցների բազմաթիւ աշակերտներն ու աշակերտու-